



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

10633

658

7-39







51  

---

p. 1038



150

2002



ԱՌԱՋՆՈՐԴ

ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

ԿԱՄ


ՏԱՐԵՐՔ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ

Պատմութիւն վաճառականութեան եւ Ասումնասիրութիւնը վաճառականութեան ամէն միւղերուն վրայ, — Առեւտրական Օրէնսգրտութիւն, Աշխարհագրութիւն, Տնտեսագիտութիւն. — վաճառագիտութիւն, — Թղթակցութիւն Հայ. Տաճկ. Կապ. եւ Անգլ. լեզուներով. — Արհեստից եւ արհեստական խոր զիւտերու վրայ ծանօթութիւններ. — Առեւտրական, սակարանական եւ պանրայի հաշիւներ եւ այլն.



Հաստ Ը. — Տեսք Զ.



Կ. ՊՈՒԼՍ

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

1901



# Պ Ա Ն Ք Ա

Ա. Սահման. — Ինչպէս հիմնուեցաւ առաջին պանրան. — Բ. Գասակարգութիւն. — Գ. Պանրայի գործողութիւններ. — Դ. Առեւտրական պանրա. 1. Աւանդ, 2. Զեղչ, 3. Ընթացիկ հաշիւ, 4. Փոխաւրուութիւն եւ կանխավճար, 5. Փոխանակութիւն եւ արգիթրած. — Ե. Շըրջարերու թեան պանրա. — Զ. Շահադրութեան պանրա. — Է. Պանրաներուն մատուցած ծառայութիւնները. — Ը. Պանրաներուն գայութեան պայմանները. — Թ. Պանր տ'Անկլըդէն. — Ժ. Պանր տը Ֆրանս. — ԺԱ. Գերմանիոյ, Աւստրիոյ, Ռուսիոյ, Իտալիոյ, Մ. Նահանգաց, Սպանիոյ, Պելժիոյ, Հոլանտայի, Բորթուկալի, Զուիցերիոյ, Պուլկարիոյ, Սերպիոյ, Յունաստանի զլխաւոր պանրաներուն վրայ պատմական, օրինական եւ հաշուական ծանօթութիւններ. — ԺԲ. Օսմ. կայսերական պանրա. — ԺԳ. Ժողովրդային պանրաներ:

## Ա.

« Պանքա բառը, իր ընդհանուր առումով, կը նշանակէ առուտուր մը որ կը կայանայ ուրիշի մը հաշուոյն գանձումներ և վճարումներ ընելու և դրամ, փոխանակագիր, ի հրամանի մուրհակ և ճարտարարուեստական ձեռնարկութեանց բաժնեթուղթեր գնելու և ծախելու մէջ: » (\*)

Մ. Կօթիէի տուած այս սահման շատ անձուկ է: Ուստի, զանազան տեսակ պանքաներու մատուցած ծառայութիւնները քննելէ, ուսումնասիրելէ առաջ, համառօտակի գծենք անոնց առաջին և զլխաւոր պաշտօնները, որպէս զի կարելի ըլլայ դիւրութեամբ ըմբռնել անոնց տնտեսական դերն եւ կատարած գործողութիւններուն տարբերութիւնները:

1. Այսպէս, օրինակի համար, վարկի գաղափարն անբաժանելի կերպով կապուած է պանքայի գաղափարին հետ: Այսու հանդերձ սխալ է ըսել թէ պանքայի մը նպատակն է վարկ ծախել: Սխալ է պանքէտը վարկի վաճառական մը

[\*] Encyclopédie du Droit, հեղինակութիւն Պանր տը Ֆրանսի դեր—տնօրէն Մ. Կօթիէի:



նկատել, ինչպէս ըրած են շատեր: Իրաւ է թէ վարկի բազմատեսակ գործողութիւնք պանքաներու կատարած գործողութիւններուն ամէնէն կարեւորներն են, բայց լոկ անոնք չեն: Առջի ատեններն իսկ, պանքաներն ընդարձակ առուտուր կ'ընէին ճշմարիտ ապրանքի մը, այն է թանկագին մետաղներու վրայ: Առեւտուրի այս տեսակը տարածուեցաւ, յառաջդիմեց միջազգային վաճառականութեան կարեւորութիւն ստանալուն համեմատութեամբ: Դրամներու փոխանակութիւնը մեծ տեղ կը բռնէր միջին դարու մէջ երբ դրամական դրութիւնք աւելի շատ և աւելի անկայուն, անհաստատ էին եւ երբ վարկի գործիները տակաւին այսքան յառաջդիմութիւն ըրած չէին: Ինչպէս կը տեսնուի, թանկագին մետաղներու այս մասնաւոր առուտուրին մէջ վարկը գործ չունի: Պանքէսը ճիշտ կը նմանի որոշ ապրանք մը ծախող վաճառականի մը:

2. Գործողութիւններու ուրիշ շարք մ'ալ կայ, որուն պատմական ծագումն հետաքրքրական հանգամանք մ'ունի: Վենետիկցի վաճառականներ, որք Տէրութենէն առնելիք ունէին, որոշեցին իրենց պահանջաթղթերը տեղ մը մթերել: Իրենց նպատակն էր պարտքին տոկոսներն հաւաքել և թուղթերը պահել: Անհիմն չէ կարծել նաեւ թէ այս տեսակ մը ընկերակցութիւնը, կամ արդի բառով սենսիֆան, կազմուած էր գորաւոր կազմակերպութիւն մը տալու համար պահանջատէրներուն հանդէպ կամայական և բազմապահանջ մարմնոյ մը: Միացեալ պահանջատէրք չուտով նշմարեցին այն օգուտը, որ առաջ պիտի գար այս հաստատութեան միջոցաւ եւ փոխանցումի դրութեամբ կատարել տալով ընկերակիցներու առեւտրական յարաբերութիւններէն ծագում առած վճարումներն ու գանձումները: Աւելի ետքը, այսինքն 17րդ դարուն սկիզբները, նոյն այս նպատակաւ ուրիշ պանքաներ հիմնուեցան Եւրոպայի առեւտրական գլխաւոր կեդրոններուն և մասնաւորապէս Ամսդէրտամի և Համպուրկի մէջ: Այսպէս ծագում առին ահա աւանդի և փոխանցման պանքաները, որոց կազմակերպութիւնն հետզհետէ կատարելագործուեցաւ, սեղանաւորական յարաբերութեանց ըն-

դարձակուելուն համեմատութեամբ: Արդ, աւանդի և փոխանցումի այս գործողութիւններուն մէջ վարկն ուղղակի դեր չի կատարեր: Ծառայութիւնը, զոր այս գործողութիւնք կ'ընծայեն հասարակութեան, դրամի և ժամանակի խնայողութիւն է լոկ:

3. Վարկի գործողութիւնք, — որոց զանազան եղանակներուն վրայ պիտի խօսինք յետոյ — աւելի փափուկ են և այլապէս օգտակար ծառայութիւններ կը մատուցանեն: Պանքէսն այլ եւս պարզ արկղակալ մը կամ տոմարակալ մը չէ, այլ վարկի ճշմարիտ վաճառական մը կամ բառին բուն իմաստով միջնորդ մը՝ իրենց դրամը շահագործել փափաքող գրամատէրներուն և այդ դրամէն օգտուելու ռզուաւ առեւտրական և ճարտարարուեստական ձեռնարկուներու միջև: Իր պաշտօնն է ուրեմն միութեան գիծն ըլլալ մատուցումի և խնդրանքի միջև այն դրամագլուխներուն որք առանց իրենցիւր ու ցան պիտի մնային: Զեղչը, — առեւտրական պանքաներու վարկի ձեւերուն ամէնէն կարեւորը — գործողութիւն մ'է որով պանքէսը կը հաւանի դրամ տալ վաճառականի մը, ժամանակէ մը ետք վճարելու անոր գրաւոր խոստմանը վրայ: Այս խոստումը, որ երրորդի մը փոխանցումը կը կրէ (ծրո), կը կոչուի փոխանակագիր, հրամանի մուրհակ եւլն: Պանքէսը՝ իր մատուցած ծառայութեան գինն առնելէ եւ դրամը տալէ ետք՝ այդ խոստմնագրին տէրը կ'ըլլայ: Մինչեւ հոս գործողութիւնը շատ պարզ եւ տարրական է:

4. Պանքէսին զեղչած առեւտրական թուղթն արդարեւ իրեն համար ուրիշ բան չէ բայց եթէ վաճառականին պարտքը ցոյց տուող թուղթ մը: Նաեւ տեսակ մը դրամ է, զոր կրնայ ըստ պարագային գործածել իր մէկ պարտքը վճարելու համար ուրիշ պանքէսի մը, փոխանակ իր թղթապանակին մէջ պահելու և պայմանօրին սպասելու: Ասով, վարկի նախնական գործողութեան վրայ կ'աւելնան նաեւ դրամի փոխադրութեան խնայողութիւնն և տեղէ տեղ փոխանցումներով վճարելու դիւրութիւնը: Այսու հանդերձ, պանքէսին առեւտրական թուղթերու այս շրջաբերութիւն բաւական սահմանափակ է: Փոխանցումը (ծրո) նիւթական եւ բարո-



մայրամասն իսկապէս մ. տայ չդժմայ կուտարայ զն զմայ  
 յական դժուարութիւններ կը ներկայացնէ: Յաջորդական  
 ճիւղները բաւական տեղ կը բռնեն թուղթին վրայ: Լոնտոնցի  
 պանքէն մը, Մր. Լոյտ Սամուէլ, կը հաստատէ թէ 120 ճի-  
 րօյով ծածկուած թուղթ մը տեսած է: Եւ յետոյ բարոյական  
 տեսակէտով, ոչ-հանրածանօթ փոխանցողներուն հատուցա-  
 նելու կարողութեան մասին յայտնուած տարակոյսը կայ: Ա-  
 սոր համար էր որ խորհուեցաւ շրջաբերութեան հանել  
 պանքէն ըսուած թուղթեր, որք տեսակ մը թղթադրամ են: Այս  
 տոմսեր կը ներկայացնեն ինչ ինչ առաւելութիւններ,  
 զորս պիտի ուսումնասիրենք երբ խօսինք շրջաբերութեան  
 հանումի (émission) վրայ: Տոմսեր շրջաբերութեան հանելու  
 դադարիարն աւանդի պանքաներու գործառնութիւններէն  
 ծագում առած է: Եւ արդարեւ, Սիօքսոլմի պանքան որ  
 17րդ դարուն երկրորդ կիսուն հիմնուած է եւ առաջին ան-  
 դամ պանքտոմս հանած, ամէնէն առաջ աւանդի պանքա մը  
 եղաւ, Վենետիկի եւ Ամսդէրտամի պանքաներուն պէս: Իր  
 աւանդի ստացագրերն յաջողեցան իբր հնչուն դրամ շրջա-  
 բերիլ բովանդակ Շուէտի մէջ եւ Եւրոպայի մէջ ընթացիկ  
 գործածութիւն ունեցող առաջին պանքտոմսերն եղան: Այդ  
 թուականէն շատ առաջ, արդէն Զինաստանի ծանօթ էր  
 շրջաբերութեան այս եղանակը: Պանքտոմսերուն հանումն  
 առեւտրական գործողութիւն մ'է և ո'չ թէ արքունի իրա-  
 ւունք մը, ինչպէս կը կարծուէր առաջ: Սխալ է նաեւ կար-  
 ծել թէ հանրային պանքա մը միայն այս իրաւունքը կը վա-  
 յելէ: Մասնաւոր պանքա մ'ալ կրնայ տոմս շրջաբերութեան  
 հանել, առանց հանրային պանքա մը նկատուելու: Ժիշտ չէ  
 նաեւ հանրային պանքա նկատել բաժնեթուղթերով հիմ-  
 նուած հաստատութիւնները, Պանքա մը, ըլլա՛յ երկու երեք,  
 ըլլա՛յ հազարաւոր դրամատէրներէ կազմուած, միշտ կը միայ  
 մասնաւոր ձեռնարկութիւն մը, եթէ իր անօրէնութիւնն ու  
 վարչութիւնը կառավարական հսկողութենէ ազատ են:  
 « Հանրային պանքա » անունը պատշաճ է վերապահել այն  
 պանքաներուն որք հանրային նկարագիր ունեցող հաստա-  
 տութիւններ եղած են Տէրութեան հետ իրենց յարաբերու-  
 թիւններուն հետեւանօք: Շրջաբերութեան պանքաները,

քանի մը բացառութիւններէ զատ, և այնպիսի պատմական  
 պատճառներով զորս յետոյ պիտի թուենք, եղած են եւ  
 տակաւին շատ երկիրներու մէջ աւելի կամ նուազ հանրային  
 բնութիւն ունեցող պանքաներ են, Տէրութեան հետ իրենց  
 անձուկ կամ լայն յարաբերութիւններուն համեմատ:  
 5. Մինչեւ հոս առեւտրական վարկի վրայ խօսե-  
 ցանք: Կան նաեւ մասնաւորապէս կալուածական փոխառ-  
 ւութիւն կատարող հաստատութիւններ, որք, առեւտրա-  
 կան և կալուածական փոխատուութեանց միջեւ կեցած տար-  
 բերութեան հետեւանքով, կազմակերպութեան տարբեր պայ-  
 մաններ ունին: Ուրիշ առթիւ ընդարձակ բացատրութիւններ  
 պիտի տանք կալուածական վարկի վրայ, բայց նաեւ առիթ  
 պիտի ունենանք անոր մասին քանի մը խօսք ըսելու երբ քըն-  
 նենք առեւտրական պանքաներու գոյութեան պայմանները:  
 6. Առեւտրական պանքաներու այս նախնական գործո-  
 ղութիւններէն դուրս, այսինքն դրամներու փոխանակու-  
 թիւն, զեղչ, գանձում, տոմսերու շրջաբերութեան հա-  
 նում եւ վարկ՝ իր զանազան ձեւերով, կան նաեւ ուրիշ  
 տեսակ հաստատութիւններ որք կը կոչուին «չհաղիտական  
 պանքա»: Ասոնք ալ սկզբամբ նմանօրինակ գործողութիւն-  
 ներ կատարող հաստատութիւններ են քանի որ փոխառ-  
 ւութիւն կ'ընեն և արժէթուղթ կը գնեն ու կը ծա-  
 խեն, բայց միւս պանքաներէն կը տարբերին իրենց կա-  
 տարած գործողութիւններուն բնութեամբը: Արժէթուղ-  
 թերը, զոր կը գնեն ու կը ծախեն, Սակարանի արժէթուղ-  
 թեր են լոկ, որք բոլորովին կը տարբերին առեւտրական  
 թուղթերէն: Միւս կողմէ, առեւտրական պանքաներէ կը  
 տարբերին նաեւ սա որոշ պատճառով որ Տէրութեանց կամ  
 մասնաւոր հաստատութիւններու փոխատուութիւն կ'ընեն  
 այնպիսի նպատակներով որք հեռի են առեւտրական ըլլալէ:  
 Իրենց գործառնութեանց մէջ առաւելակշիւ դեր կը կատա-  
 րեն դիպուածն ու շահագիտութիւնը, մինչ միւս պանքա-  
 ներուն մէջ առեւտրական հաստատ հիմերու վրայ միայն տե-  
 դի կ'ունենան գործառնութիւնք: Այսվերապահումներն ընելէ  
 ետք, ըսենք թէ շահագիտութեան պանքաներն ալ օգտա-  
 կար գործիներ են, ինչպէս պիտի տեսնենք յետոյ:



### ՀԱՇԻՒՆԵՐՈՒ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ

ՕՐՀԱՇԻՒ. — ՄԱՅՐ ՀԱՇԻՒ. — ՆՈՐ ԴՐՈՒԹԻՒՆ ՄԸ. —  
ԱՐԱԳ ՈՒ ՃԻՇՏ

Վաճառատան մը գործողութիւնք նախ օժանդակ տեարակները կ'անցնին և յետոյ Օրհաշիւ ու Մայր հաշիւ: Ուրեմն Մայր հաշիւն Օրհաշիւին և աս ալ օժանդակներուն ընդօրինակութիւնն է լոկ: Ի՞նչ հարկ օժանդակներու մէջ գտնուած միեւնոյն թիւերը տանիլ շարել Մայր հաշիւին մէջ: Ժամանակի կորուստ չէ՞: Տեղէ տեղ փոխադրելով սխալներու տեղի տալ չէ՞: Եթէ Մայր հաշիւն տեղեկութիւն առնել կ'ուզենք՝ և է հաշուի մասին, օժանդակներէն ալ աւելի աղէկ կ'առնենք, քանի որ անոնք աւելի մանրամասն բռնուած են: Հետեւապէս Մայր հաշիւին մէջ գտնուած Սնտուկի, Գանձելի և Վճարելի տոմսակներու, Ընդհ. ապրանքի եւն. հաշիւներն աւելորդ են: Մայր հաշուին մէջ անցած են կշիռներու հաւասարութիւնն ապահովելու համար: Այս հաւասարութիւն ուրիշ կերպով ալ ձեռք կը բերուի: Ասոր վրայ յետոյ պիտի խօսինք:

Օրհաշիւ. — Օրհաշիւը բանի մը չի ծառայեր: Կը գործածեն նախ սովորութեամբ և յետոյ որովհետեւ օրէնքը կը պահանջէ: Շատ կարելի է զանց ընել զայն և հաշիւներն ուղղակի օժանդակներէն Մայր հաշիւ տանիլ: Բայց որովհետեւ, ինչպէս ըսինք, օրէնքը կը պահանջէ Օրհաշիւ մը բռնել, կրնանք աւելի պարզ, ամփոփ ձեւ մը տալ անոր: Գործողութիւնները կը գրուին մէկ գծի վրայ, թուականի կարգով: Միայն վեց սիւնակներ պէտք են հետեւեալ հաշիւներուն համար. — 1. Վաճառատուն, 2. Շահ ու զեւ, 3. Գնող, 4. Վաճառող, 5. Դրամսկր, 6. Զանգակ:

Այս սիւնակներուն մէջ օրն օրին կ'արձանագրուին, կը դասաւորուին, կը հակակշռուին գործողութիւնները: Սիւնակներու այս պարիկ թիւ գործնական հանգամանք մը կուտայ Օրհաշիւին, որուն մէջ սխալները վերջին աստիճան կը սահմանափակուին:

Սիւնակներու գործածութիւնը. — Ա. Վաճառատուն. — Փոխանակ զատ զատ սիւնակներ գործածելու կարասի, սնտուկի, ընդհ. ապրանքի, գանձելի և վճարելի տոմսակներու համար, մէկ հաշիւ միայն կը բացուի « Վաճառատան հաշիւ » անունով, որուն պարտքին կողմը կ'անցնի ինչ որ մտնէ վաճառատան մէջ, օրինակ. կարասի, ընդհ. ապրանք եւն., և պահանջէին կողմը՝ ինչ որ դուրս ելնէ վաճառատունէն, ապրանք, թուղթ եւն.: Պարտքին ու պահանջքին տարբերութիւնը վաճառատան պարտքը կամ պահանջքը ցոյց պիտի տայ: Հակակշիռը կատարելու է օժանդակ տեարակներուն հետ, քանի որ Մայր հաշիւին մէջ սնտուկի, ընդհ. ապրանք եւն. հաշիւ չունինք: Այս սիւնակին մէջ անցընելու է նաեւ ապրանքներու վրայ եղած զանազան ծախքերը: Բ. Շահ ու զեւ. — Այս սիւնակին մէջ կ'անցնին շահերն ու վնասները, ընդհ. ծախքերը, տոկոսները, յանձնարարողչէքները եւն.: Պարտքին գումարը պիտի ցոյց տայ կորուստին կամ ծախքերուն քանակութիւնը, իսկ պահանջքին գումարը պիտի ցուցնէ շահը: Գ. Գնող. — Գնողներու վերաբերեալ բոլոր գործողութիւնք այս սիւնակին պարտքին կամ պահանջքին կողմը կ'անցնին ըստ պարագային: Երկու կողման տարբերութիւնը ցոյց պիտի տայ գնողներուն պարտքը: Դ. Վաճառող. — Նոյն ձեւ: Ե. Դրամսկր. — Նոյն ձեւ: Զ. Զանգակ. — Այս սիւնակին մէջ կ'անցնի ինչ որ կարելի չէ դնել միւսներուն մէջ. ինչպէս գրամագլուխ, մէկու մը կողմէ վաճառատան եղած փոխատուութիւն եւն.: — Եզրակացութիւն. — Այս Օրհաշիւով բոլոր գործողութիւնք կ'արձանագրուին, կը դասակարգուին: Հակակշիռը մնայուն է: Ամէն օր կարելի է վաճառատան ստոյգ վիճակը գիտնալ: Յաւելում մը կը բաւէ զուտ շահը գտնելու համար: Տեսէք ի՞նչպէս. —



Վ.Ա.ՃԱՌՈՒՑՈՒՆ		ՇԱՀ ՈՒ ՁԷՆ	
ՊԱՐՏԻ	ՊԱՀԱՆՁԷ	ՊԱՐՏԻ	ՊԱՀԱՆՁԷ
483617	402543	16449	2410
16449	2410		
500036	404953		

Շահ ու զէնի գումարները վաճառատան հաշույն գումարներուն վրայ աւելցնելով, կը տեսնենք որ վաճառատունը կը պարտի 500036 և կը պահանջէ 404953: Այս վերջին գումարին վրայ աւելցնելու է գոյքը: Կարասի, սնտուկ, ապրանք, թուղթ եւն. զոր օրինակ 109243. —

Պահանջք	404953	
Գոյք	109243	
	514196	Որմէ զեղջելով վաճառատան
Պարտքը	500036	
Կ'ունենանք զուտ շահ	14160	(Շարունակելի)

## ՍՆԱՆԿՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ա.

Գերման իրաւաբանութիւնը՝ ֆրանսականին հակառակն ըլլալով՝ սնանկութիւնն հաւասար կը նկատէ ամէն պարտականի համար, վաճառական կամ ո՛չ: Այս դրութիւնն է որ կը կոչուի « քաղաքային սնանկութիւն »: Գերմանիոյ արդի սնանկութեանց օրէնքը (Konkursordnung), որ 214 յօդուածէ կը բաղկանայ, 1877 Փետր. 10ին յորինուած և 1879 Հոկտ. 1էն ի վեր պարտաւորիչ եղած է: Աւստրիական օրէնքն աւելի հին է: 1868 Դեկտ. 25 թուականը կը կրէ: Հունգարիոյ մէջ ալ ուրիշ օրէնք մը կայ որ 1881 Մայիս 30ին հաստատուած է: Ռուսական օրէնքն 1832 թուականը կը կրէ և տարբեր տրամադրութիւններ ունի վաճառականի մը և ոչ-վաճառականի մը սնանկութեանց մասին: Երկար ատենէ ի վեր խըն-

դիր եղած է կանոնաւորութիւն և յստակութիւն մտցնել ուստի օրէնադրութեան մէջ ուր շփոթ կէտեր չատ կան: Զուիցերիա և Հոլանտա եւս կը գտնուին այն երկիրներու շարքին մէջ որք սնանկութեանց վերաբերեալ օրէնքներու մասին աւելի դերմանական դրութեան կը մօտենան քան ֆրանսականին: Զուիցերիա 1889էն ի վեր դաշնակցային օրէնք մ'ունի « պարտքերու և սնանկութեանց » յատուկ: Հոն, այն ատեն միայն սնանկութիւն կը վճռուի, երբ պաշտօնական առաջին ազդարարութիւն մը անհետեւանք մնացած է: Հոլանտա թէեւ տակաւին բարեփոխած չէ 1838ի Առեւտրական Օրինագիրքը, բայց օրէնքներու վերաքննութեան յանձնաժողովը կրցած է բարեփոխել տալ սնանկութեանց վերաբերեալ օրէնքը, որ 1893 Սեպտ. 30ին քուէարկուեցաւ և 1896 Սեպտ. 1ին գործադրութեան դրուեցաւ: Անգլիա քանիցս բարեփոխած է իր սնանկութեան օրէնքը: Արդի օրէնքը (Bankruptcy act) 1883էն ի վեր կը գործադրուի և 170 յօդուած ունի: Իր նախորդներէն ունեցած առաւելութիւնն այս է որ նախատարիք հասուեցարուքին մը հաստատած է, կարելի եղածին չափ նուազեցնելու համար սնանկութիւնը: Մ. Նահանգաց մէջ 1899 Յնվ. էն ի վեր կը գործադրուի դաշնակցային օրէնք մը սնանկութեանց մասին: Զորորդ փորձն է այս որ եղած է միօրինակութիւն մը հաստատելու համար ամէն Նահանգներու մէջ: Առաջինները գոհացուցիչ արդիւնք տուած չըլլալով դադրած են կիրառութենէ: Այս ուսումնասիրութեան ընթացքին մէջ առիթ պիտի ունենանք տակաւին ցոյց տալու այս դանազան երկիրներու օրէնքներուն տարբերութիւնները, բայց ի այն հիմնական տարբերութիւններէն, զորս նշանակեցինք:

Բ.

Սնանկութեան օրէնքներու բաղդատական ուսումնասիրութիւնը ներկայացնելէ առաջ բացատրենք քանի մը բառեր որք յաճախ պիտի ներկայանան այս ուսումնասիրութեան ընթացքին մէջ:

1.— Պանքրուդը սնանկութեան ծանրացուցիչ պարագայ



մ'է, որու հետեւանքները պատժական բնութիւն ունին: Պանֆրուղը երկու տեսակ է, պարզ, խարդախեալ:

1 — Պարզ պանֆրուղին համար օրէնքը մէկ ամիսէն մինչեւ երկու տարի բանտարկութիւն կ'որոշէ: Այս պանֆրուղ երկու կարգի կը բաժնուի, պարտաւորիչ և կամաւոր:

a) — Պարտաւորիչ պանֆրուղ է երբ հաստատուի թէ սնանկը Ա.) Անձնական կամ տնական չափազանց ծախքեր բրած է, Բ.) Բախտախնդիր ձեռնարկներու կամ սակարանի գործառնութիւններու մէջ մեծ գումարներ վատնած է, Գ.) Սնանկութիւնն յապաղեցնելու համար ապրանք գնած ու պակաս գնով ծախած է կամ բարձր տոկոսներով փոխառութիւններ բրած է, Դ.) Վճարումները դադրեցնելէն ետք դրամ տուած է պահանջատէրի մը, ի վնաս միւսներուն:

b) — Կամաւոր Պանֆրուղի պարագային մէջ դատարանը կրնայ անպարտութեան վճիռ առնել: Այս պանֆրուղին տեղի տուող պատճառներն են Ա.) Սնանկութեան նոր յայտարարութիւն, առանց կատարելու նախորդ ֆոնֆորսալոյի մը պարտաւորութիւնները, Բ.) Վճարումներու դադարումէն ետք, 15 օրուան մէջ հաշուեկշիռն դատարանի չյանձնուիլը, Գ.) Օրէնքին որոշած պայմանաժամերուն մէջ սնանկին չներկայանալը սկեսիֆներու առջեւ, Դ.) Տետրակներու անգոյութիւնը կամ անճշտութիւնը:

II — Խարդախեալ պանֆրուղը ոճիր մ'է զոր կը դատէ Եղեանադատ Առեանը, և ժամանակաւոր շղթայակապ աշխատութեան պատիժ կուտայ: Ասոր տեղի տուող պատճառներն են Ա.) Տետրակներու անյայտացումը, Բ.) Ապրանքին մէկ մասին փախցուիլը, Գ.) Պարտքը շատ ցուցնելու համար խարդախութեամբ անոյ պարտքեր շինելը ևլն: Խարդախեալ պանֆրուղի ենթարկուողը չի կրնար ըստ օրինի ֆոնֆորսալո կնքել, պատիւը վերահաստատել — առաւելութիւններ, զոր օրէնքը չի զլանար պարզ պանֆրուղի ենթարկուողին:

2 — Տեֆոնֆրուղ. — Սնանկութեան և տեֆոնֆրուղի մէջ տարբերութիւն կայ: Առաջինը, ըստ ֆրանսական օրէնքի, լոկ վաճառականներու յատուկ է, իսկ երկրորդն այն պարտականներուն որք վաճառական չեն: Այս վերջին դրութիւն

մասնաւոր կազմակերպութիւն մը չունի: Պարտականին ամբողջ գոյքը չի գրաւուիր այլ մէկ մասը միայն, մասա չի կազմուիր և ֆոնֆորսալո չի կնքուիր: Սնանկութեան այս ձեւը պանֆրուղ ալ չունի: Եւրոպական ամէն երկիրներ այս մասին հետեւած չեն Ֆրանսական օրէնքներուն: Եւրոպայի արեւմտեան մասին մէջ միայն Պելժիա, Իտալիա և Լիւքսեմպուրկի մեծ դքսութիւնն են որ Ֆրանսականին կը հետեւին: Իսկ միւս երկիրներ, ինչպէս Գերմանիա, Հոլանտա ևն. սնանկութեան օրէնքներն առ հասարակ կը կիրարկեն, ինչ որ ալ ըլլայ պարտականին արհեստը: Անգլիոյ մէջ, ուր պարտականին առեւտրական կամ քաղաքային հանգամանքն ազդեցութիւն չընէր սնանկութեան վճիռն լրայ, միայն վճարմանց դադարումը չէ որ այդ սնանկութիւնն առաջ կը բերէ: Օրէնքը կը թուէ նաեւ ինչ ինչ գործեր, զոր պարտականն բրած ըլլալու է, ինչպէս ապրանքներուն ուրիշի փոխանցումը ևն. ևն.: Անգլիա քաղաքային սնանկութեան համար ալ ֆոնֆորսալո կ'ընդունի: Կայ նաեւ միջին դրութիւն մը, աւստրիական և սպանիական օրինազիրքերուն մէջ: Աւստրիական դատարանք առեւտրական սնանկութիւն կը վճեն երբ վճարմանց դադարում ըլլայ և քաղաքային սնանկութիւն՝ երբ պարտականին վճարելու անկարող ըլլալն ապացուցուի: Սպանիոյ մէջ ալ այսպէս է: Առեւտրական սնանկութիւնը կը կոչուի 'Բիեպա, իսկ քաղաքայինը՝ Բոնֆուրգո: Միայն թէ աւստրիական օրէնքը չընդունիր որ ոչ վաճառականի մը սնանկութիւնը պարտապահանջներուն մեծամասնութեան կողմէ ընդունուած ֆոնֆորսալոյով մը կարգադրուի, մինչ Սպանիոյ մէջ ֆոնֆորսալոն ընդհակառակն երկու սնանկութեանց համար ալ ընդունելի կը նկատուի:

3. — Բարեկամական կամ կանխարգել ֆոնֆորսալո (Concordat amiable ou preventif). — Պարտականներէ ոմանք սնանկութեան վճեն զերծ կը մնան, կարգադրութեան մը մտնելով իրենց պահանջատէրերուն հետ, որք կը հաւանին կնքել սովորական պայմանագրութիւն մը, որ դատարանին կողմէ վաւերացուելու պէտք չունի: Այս պայմանագրութիւնը կը կոչուի բարեկամական ֆոնֆորսալո: — Երբ պար-



տականն յաջողի այս տեսակ կարգադրութիւն մը ընդունել տալ պահանջատէրերուն, ըստ օրինի սնանկ չի հոչակուիր և իր քաղաքային իրաւունքները չի կորսնցնէր: Հետեւապէս պէտք չունի պատիւը վերահաստատել ի վերջոյ: Բայց ըստ ֆրանսական իրաւաբանութեան, նորէն սնանկութիւնն է օրինական դրութիւնը, որու ներքեւ կը գտնուի պարտականը, այսպիսի պարագայի մը մէջ: Եթէ խարդախութիւն գործած ըլլալն ապացուցուի, պարտականն անմիջապէս Եղեռնադատ Ատենին առջեւ կը հանուի, թէեւ առեւտրական դատարանը սնանկութիւն վճռած չըլլայ անոր դէմ:

4. — Անգլիոյ մէջ, օրէնքով, հարկ է որ ամէն մասնաւոր կարգադրութիւն արձանագրուի ձեռնհաս պաշտօնատան մէջ:

Բարեկամական ֆոնֆորսաթօ բացատրութիւնն ուրիշ իմաստով ըմբռնուեցաւ 1848ին եւ 1870ին: Վաճառականութիւնը, այդ թուականներուն, առժամեայ դրութեան մը ենթարկուեցաւ այն տաղանապալից կացութեան պատճառաւ, ուր կը գտնուէր: Սնանկութեան օրէնքներու կիրառումն առժամապէս դադրեցաւ և որոշուեցաւ որ եթէ վաճառական մը յաջողէր համաձայնութիւն գոյացնել իր պարտապահանջներուն մեծամասնութեան հետ, վճարումներու դադարումը դատարանին իմաց չտուած, կրնար հաշուեյարդարութիւն ընել տալ, առանց կրելու սնանկութեան անունն և հետեւանքները: Այս օրէնքներ առժամեայ կիրառութիւն միայն ունեցան: — Քանի որ կը խօսինք սնանկութենէ խուսափելու համար վաճառականին տրուած միջոցներուն վրայ, անցողակի յիշենք նաև վնարմանց յետաձգումը (sursis de paiements): Այս առանձնաշնորհում, պատմական տեսակէտով, ծագում առած է այն իշխանութենէն զոր կառավարութիւնք ունէին հին ատենները — այն է շնորհաթուղթեր (lettres de grâce) տալ առժամապէս նեղութեան մէջ ինկող վստահելի պարտականներու: Այսօր պահանջատեարք իրենք կը շնորհեն այս յետաձգումը, զոր ստանալու համար հարկ է որ պարտքը չկրցող վճարող վաճառականն հաւասարակշիռ պիլանջօ մը ունենայ կամ գէթ պարտքին հաւասար գոյքի մը գոյութիւնն ապացուցանէ: Այս պայմաններուն մէջ գտնուող վաճառականը

դատարանէն հրաման կ'ընդունի ի նիստ հրաւիրել պահանջատէրները, որք ժիւժ ֆոնֆուրի մը միջոցաւ պարտականին հաշիւները քննել տալէ ետք, յետաձգում կը շնորհեն եթէ համոզուին թէ վճարմանց դադարումն արտասովոր և անակնունելի պատճառէ մը առաջ եկած է: Այս յետաձգման պահուն, որոյ տեւողութիւնն որոշուած է օրէնքով, ամէն հետապնդում առկա կը ձգուի: Պիտիոյ եւ Հոլանտայի մէջ այսպէս է: Իտալիոյ եւ Սպանիոյ մէջ ալ կայ մօրադորիա անունով որ առեւտրական ծանր տագնապի մը ատեն կը շնորհուի վաճառականներուն, ինչպէս Թուրքիոյ մէջ ալ եղաւ:

(Շարունակելի)



### Հ Ա Շ Ո Ւ Ա Կ Ա Ն

## Վ Ա Ճ Ա Ռ Մ Ա Ն Գ Ի Ն Ը

Ապրանքի մը արժէգինին և վաճառման գինին տարբերութիւնը վաճառականին շահը կը կազմէ: Վաճառման գինը գտնելու համար ընդհանրապէս այսչափ  $\frac{0}{100}$  մը կ'աւելցուի արժէգինին վրայ: Սխալ է աս: Օրինակով մը բացատրենք: — Եթէ 250 դրշ. արժող ապրանքի մը վրայ 10% աւելցնելով 275 դրշ. ծախսենք, ճիշտ 10% շահած չենք ըլլար, այլ  $\frac{25}{275}$  միայն կամ 9,09%: Շատ հաշուակալներ այսպէս կ'ընեն և տարւոյն վերջը զարմանքով կը տեսնեն որ եղած զուտ շահն յուսացուածէն վար է: Դիտելի է որ մէն մի 100 10 դրշ. շահ պիտի բերէ. հետեւապէս 100ի համապատասխանող արժէգինը կ'ըլլայ 90 դրշ. կամ ուրիշ խօսքով մէն մի 100 երկու մասէ կը բազկանայ, այն է 10 դրշ. շահ և 90 դրշ. արժէգին: Արդ,



90 զրշ. արժեզինին վրայ պիտի շահինք 10  
 1 » » » »  $\frac{10}{90}$   
 100 » » »  $\frac{100 \times 10}{90} = 11,11$

Կ Ա Մ

Վաճառում Բ 250 գնում  
 Գնում 90 100 վաճառում  
 $\text{Բ} = \frac{250 \times 100}{90} = 277,77$

Այս գումարին 10 0/0ը, այն է 27,77ը, զեղչելով կ'ու-  
 նենանք 250 զրշ. որ ապրանքին բուն արժեզինն է :

Շատ հաշուակալներ առ խարխար կը կատարեն այս գոր-  
 ծողութիւնները : Դիւրութեան համար կը ներկայացնենք  
 հետեւեալ ցուցակը . —

Վաճառման գի- նին վրայ տան- լու համար	Պէտք է արժէքին վրայ աւելցնել	Վաճառման գի- նին վրայ տան- լու համար	Պէտք է արժէքին վրայ աւելցնել
5 0/0	5,263 0/0	21 0/0	26,582
6 »	6,383 »	22 »	28,205
7 »	7,527 »	23 »	29,87
8 »	8,695 »	24 »	31,579
9 »	9,889 »	<b>25 »</b>	<b>33,333</b>
10 »	11,111 »	26 »	35,135
11 »	12,36 »	27 »	36,986
12 »	13,636 »	28 »	38,888
13 »	14,942 »	29 »	40,845
14 »	16,28 »	30 »	42,857
15 »	17,647 »	<b>50 »</b>	<b>100</b>
16 »	19,047 »	<b>60 »</b>	150
17 »	20,482 »	75 »	300
18 »	21,951 »	80 »	400
19 »	23,456 »	90 »	900
<b>20 »</b>	<b>25</b>	99 »	9900
		100 »	[Անկարելի]

Հիօն 20 Մարտ 1901

Տէ՛ր

Շատ երախտապարտ պիտի ըլլանք Ձեզ եթէ հաճիք  
 Ա. Բ. վաճառատան պատուաւորութեան և կարողութեան  
 վրայ ձեր կարծիքն իմացնել մեզ յառաջիկայ թղթաբերով :  
 Այս վաճառատան հետ խիստ կարեւոր գործ մը ընելու  
 վրայ ըլլալով, կը փափաքինք գիտնալ թէ մինչեւ ո՛ր աս-  
 տիճան ապահովութեամբ կրնանք գործել : Վստահ եղիք թէ  
 այս մասին Ձեր հաղորդած տեղեկութիւնները բնաւ դուրս  
 պիտի չհանենք :

Եթէ առիթը ներկայանայ, պատրաստ ենք նմանօրինակ  
 ծառայութիւն մը մատուցանել Ձեզ :

Ընդունեցէք, Տէ՛ր, մեր յարգանաց հաւատին

Բ. և Գ.

Lyon le 20 Mars 1901

Monsieur

Nous vous serions très obligés si vous vouliez bien  
 nous faire connaître, par retour du courrier, votre opi-  
 nion au sujet de la solvabilité et de l'honorabilité de la  
 raison sociale A. B.

Nous trouvant sur le point d'entrer en relations avec  
 cette maison pour une affaire d'une importance majeure,  
 nous désirerions savoir jusqu'à quel point nous pouvons  
 nous avancer avec sécurité. Ce que vous voudrez bien  
 nous communiquer à cet égard restera complètement entre  
 nous, soyez-en certains.

A l'occasion, vous pourriez compter sur nous pour  
 un service semblable.

Recevez, Monsieur, nos salutations empressées.

B. et C.



افندی

(ا. ب) عنوانی تحتہ بولنان تجارتخانہ نک معتبر وتادیہ  
 دینہ مقتدر اولوب اولدینی حقندہ کی رأی عالیکزک کلہ جک پوستہ ایله  
 طرف عاجزانہ مزہ اشعارینہ ہمت بیورلدقدہ فوق الحد منتدار  
 شکر آنکز اولہ جغمزی بیان ایدرزہ مذکور تجارتخانہ ایله غایت مهم  
 برایشدن طولایی عقد رشتہ مناسبات ایتمکلکمز قوہ قریبہ یم کش  
 اولسنہ منی مزبور تجارتخانہ نک نہ درجہ لره قدر مستحق امنیت واعتماد  
 اولدینی بیلیمک املندہ بولندیغمزدن بو بابدہ لطفاً اعطا بیوریلہ جق  
 معلومانک تمامیلہ مکتوم طوتیلہ جغنه شبہہ کز اولمامسنی رجا وبر فرصت  
 ظهورندہ بویلہ بر خدمتکزده بولمنغہ حاضر وآمادہ اولدیغمزی انہا  
 ایله عرض سلام با احترامہ ابتدار قاندی فی ۲۰ مارت سنہ ۳۱۲

Lyons, 20th March 1901

Gentleman,

We should be greatly obliged, if you would let us know, per return, your opinion concerning the solvency and respectability of the firm A. B.

Being about to transact some business of considerable importance with this house, we should like to know how far we may venture with safety. Whatever you communicate to us on the subject will, you may be sure, remain with ourselves. It would give us pleasure, on a similar occasion, to render you such a service.

We remain, Gentleman, yours truly

B. & C.

Թիւն : Չորս հատ շոգեշարժ ջաղացքներ կան որոնց երեքը միայն կը բանին : Ընտիր մետաքսին քիլօն 110-115 դր : կ'արժէ ոսկի դրամ : Գործարաններուն , խաղախորդարաններուն և մանարաններուն մէջ 2000 հոգի կ'աշխատին , տարեկան 40,000 ոսկիի սպրանքարտադրելով : Արքիանուստրիս արեւելեան երկաթուղոյ մեծ գծին կայարաններէն մին է : Մասնագիծով մը կապուած է Տէտէ Աղաճի հետ : Կայարանին շարժումն հետեւեալն է .

Գիծ	Ապրանք	Ուղեւոր
4. Պոլիս — Ադր. Պոլիս	Թօնօ	
1882	40,580	57,590
1898	71,030	56,970
Տէտէ Աղաճ — Ադր. Պոլիս		
1882	145,090	92,830
1898	258,710	111,020

Օսմանեան Կայսերական պանքան մասնաճիւղ մ'ունի : Առեւտրական սենեակ մ'ալ կայ : Առեւտրական վարկերն 90 օր են : Ամէնէն գործածական չափը քիլօն է : Երբեմն օրս ալ կը գործածուի :

**Ա.Թ.ՈՒ.** — Յենակաւոր նստարան մ'է որ կը շինուի փայտէ , եղէգէ (համրօ) ու երկաթէ : Փայտէ աթոռն առաջին կարասին է զոր շինած է ճարտարաբուստը , նախնական դարերու մէջ : Աթոռն անյիշատակ ժամանակներէ ի վեր յարդով կը հիւսուէր : Մեքենական աթոռներու շինութիւնը 16րդ դարուն սկսաւ : Այսօր ամէն տեսակները կան , բացուող , գոցուող , երկարող , լայնցող , ցածցող , բարձրացող են . Կնիւնէ (սազ) աթոռն առաջին անգամ Ամսդէրտամի մէջ շինուեցաւ Կասթէր անուն Գերմանացիի մը ձեռքով :

**Ա. Ա. Ա. Ա.** — Բամբակէ գծաւոր հիւսուածոյ , որ կը շինուի Հալէպի , Շամի , Այնթապի , Մարզուանի , Արարկիւրի , Սվազի մէջ : Գլխաւորապէս Շամի արար վաճառականներն են որ Պոլիս կը ներածեն գայն . Գաւառացիք տպածոյի տեղ կը գործածեն տոկունութեանը համար : Պոլսոյ մէջ սպառումը



քիչ է, որովհետեւ ճաշակով շինուած չեն: Քիչերը կը նախընտրեն զայն տպածոյէն: Ստորին ալաճաններու գոյները շատ շուտով կ'աւրուին մինչ ընտիրներու գոյնն անեղծ կը մնայ: Կայ նաև մետաքսէ ալաճա, որ զլիսաւորապէս Համայէ կուգայ և իսկատիպ նկար մ'ունի: 7, 8, 9, 10 արչըննոց բամբակէ ալաճաններու ծրարը 7-20 զրչ.ի կը ծախուի, իսկ մետաքսէ ալաճաններունը 20-60 զրչ.ի: Պելթիական և անգլիական Եկյթան պեղին, որուն անփնա ալ կ'ըսեն, շատ միասեց ալաճային սպառման: Ալաճայի բաց սիւրիւմ տեսակները կը կոչուին յայթ - բարմագ, խուրօթիէ, քարակիօզ, մէյսանիէ եւն.: 50-60 տարի առաջ, ալաճան հիմակուընէ շատ աւելի մեծ սպառում ունէր թէ՛ Պոլսոյ և թէ՛ գաւառներու մէջ, բայց տպածոն շատ իջեցուց անոր սպառումը: Ալաճան ընդհանրապէս 110 զրչ. ոսկիով կը ծախուի:

**Ա. Ա. Պ. Ա. Մ. Ա.** — Ամերիկեան նահանգներէն մին: Մակերեւոյթ 136,328 քառակուսի քիլոմէրք: Բնակիչ 1,725,000 որոն 750,000ը՝ սեւամարթ: Հողը՝ հարաւային և արեւմտեան կողմերը հարթ և ճախճախուտ, իսկ հիւսիս-արեւելեան կողմը՝ լեռնոտ: Գլխաւոր քաղաքներն են Մօնկոմէրի (մայրաքաղաք), Մօպին, Ֆլորէնս և Պիրմինկէմ: ճարտարարուեստական քաղաք մը, որ նոր կազմուեցաւ և քիչ ատենուան մէջ անօրինակ յառաջդիմութիւն մ'ունեցաւ: Երկաթի ու ածուխի առատ հանքեր ունի: Ալապամա մետաղագործութեան և բամբակի արտադրութեան կարեւոր կեդրոն մ'է: Տարին 1,780,000 թօնօ ձոյլ երկաթ և մէկ միլիոն հակ բամբակ կ'արտադրէ: 20 տարիէ ի վեր բամբակի բազմաթիւ գործարաններ հիմնուած են Ալապամայի մէջ և կատաղի մրցում մը հաստատած են նոյն իսկ Լանքաշիրի բամբակի գործարաններուն դէմ: Ալապամա կ'արտադրէ նաեւ տարեկան 32 միլիոն գրիւ եգիպտացորեն, 15 միլիոն տոլար արժէքով: Ունի մեծաքանակ արջառ: Առեւտուր նիւ-Օրլէանի հետ՝ Պօրնյըրի և Բօնչարգըրէնի լիճերուն միջոցաւ:

**Ա. Ա. Պ. Ա. Մ. Ա.** [Սու Մէրմէրի]. — Հանքային նիւթ մը, որ զարդանկարներու կը գործածուի: Քանի մը տեսակներ

կան, որք՝ մարմարի պէս՝ կիրի բնածխատով կազմուած են: Ալապաստրը կիսաթափանց է և ասով կը զանազանուի մարմարէն, Երակները ծուռ ու մուռ են: Կրային երկիրներու քարանձաւներուն մէջ կը գտնուի շիթաքարերու (sulfur pater) և պտկաքարերու քով: Կրային ալապաստրներէն զատ կան նաեւ կակիւղ ալապաստրներ, կիրի սիւլֆաթով կազմուած, ինչպէս գաճաքարը, որ բոլորովին ճերմակ է եւ միօրինակ կերպով կիսաթափանց: Այս ալապաստրով կը շինեն արձանիկներ, ճօճանաւոր ժամացոյցներու պատուանդաններ, անօթներ եւլն: Կակիւղ կամ գաճաքարային ալապաստրը կրայինին արժէքը, փայլը, դիմացկունութիւնը չունի: Կրային ալապաստրներուն մէջ յարգի են դեղնագոյն ճերմակները, որոնց երակները կաթնային սպիտակութիւն մ'ունին: Այսպէս է Արեւելեան ալապաստրը, որուն շահագործումը շատ հին է: Եգիպտացիք շատ գործածած են զայն: Յետոյ կուգան Երակաւոր կամ ելգաֆաւր (onyx) ալապաստրները, դեղնագոյն, որք աշտանակներու, գաւաթներու, անօթներու, սանդուղի աստիճաններու շինութեան կը գործածուին: Ալթերիական ալապաստրն աւելի թափանցիկ է: Երակները զուգահեռական են մոխրանակ համակերտոն ըլլալու: Ծանօթ էր Հոռմայեցիներուն որք շահագործած են զայն: Պզտիկ կտորուանքը կը ծառայեն կոճակներու եւլն. շինութեան: Սպանիոյ և Մեքսիքայի մէջ ալ ալապաստր կայ, բայց շատ ծանր է: Մէկ խորանարդ մէթրը 2700 քիլօ կը կշռէ: — Արտածումն ու ներածումը կարեւոր քանակութեան կը հասնին: Միայն Ֆլորանսա 1892էն 96՝ 83,648 քիլօ խամ եւ ուղղանկիւն կտրուած ալապաստր ներածած եւ 773,515 քիլօ արտածած է: — 1892 Յունվար 11ի Ֆրանսական օրէնքը մաքսատուրքէ ազատ կացուցած է խամ ալապաստրը եւ 16 սնդ. կամ աւելի թանձրութիւն ունեցող սղոցուած ալապաստրը: 16 սնդ. էն նուազ թանձրութիւն ունեցող սղոցուած ալապաստրին 100 քիլոյէն 3 ֆր. իսկ բանուած ալապաստրին 100 քիլոյէն 18 ֆր. մաքսատուրք կ'առնուի:

**Ա. Ա. Մ. Ա.** — Սեփականութիւն Միացեալ Նահանգներուն որք 1867 Յունիս 20ին Ռուսիայէ գնեցին 7,200,000



տողարի [36 միլիոն Փր. կամ աւելի քան մէկ ու կէս միլիոն Օսմ. ոսկի] : Սահմանն է հիւսիսէն Արջային սառուցեալ ովկիանոս, արեւմուտքէն Պեհրինկայի նեղուցը, հարաւ-արեւմուտքէն Սաղաղական ովկէանոս եւ հարաւէն ու արեւելքէն այն գիծը որ մինչեւ Ս. Եղիա լեռ եւ անկէ ուղիղ գծով մինչեւ Սառուցեալ ովկիանոս կ'երկարի : Մակերեւոյթ՝ 1,376,000 քառակուսի քիլոմէթր, այսինքն Փրանսայի զրէթէ երեք անգամը : Զմեռը շատ խիստ ըլլալուն, ցամաքային մասն այնքան արժէք չունի, Հտրաւ-արեւմտեան կողմի եզերաց վրայ ցուրտը նուազ սաստիկ է : Բնակիչ 35,000 հոգի, մեծ մասը բնիկ : Ունի 7 գաւառ. — 1. Սիդա. ամէնէն վաճառաչահը, ուր կան ոսկեհանքեր, անտառներ եւ լոսք (սայլոսն պալլըր) : Հեռագրով ու շոգենաւային կանոնաւոր երթեւեկութիւններով կը հաղորդակցի Բրիտանական Բոլոմպիոյ մայրաքաղաքին, Վիքտորիայի հետ : 2. Գաիսի. ունի լոսք, բրածուկ, ջրաղուէս : 3. Ունալասա, ջրաղուէս, մօրիւ : 4. Նուսակա, ուր մուշտակագործութիւնը շատ տարածուած է : 5. Բուսոնիլի. Մուշտակ : 6. Նուսոն. վերջերս ոսկեհանքեր գտնուեցան վերին Նուսոնի եւ Քլոնտայքի հովտին մէջ : 7. Արեդի, որու բնակիչները կէտ ձկան եւ փոկի որսորդութեամբ կ'ըբաղին : Սաղաղական ովկէանոսի որսարանները 1896ին 38,700 փոկ բռնած էին որոց 16,650ը Պեհրինկայի ծովէն : Այս որսարաններու մասին Անգլիոյ և Ամերիկայի միջեւ 1893ին տեղի ունեցած իրաւարարական կարգադրութիւնն յաջողած չըլլալով, 1897 Հոկտեմբերին նոր դեսպանախորհուրդ մը գումարուեցաւ Ուաշինկզընի մէջ, և վերջացաւ առանց խնդիրը կարգադրելու : Բանակցութիւնք կը շարունակուին : Վերոյիշեալ 38,700 փոկերուն 30,800ը անգլիական, 4100ը ամերիկեան և 3800ը ճարտնական նաւերու կողմէ բռնուած են : 1860էն 1890, Ալասքայի ամբողջ արտադրութեան գումարն եղած է 320 միլիոն Փր. որու 243ը մուշտակ, 48ը լոսք, 6ը բրածուկ եւ 23ը ոսկի և արծաթ : Ալասքայի վրայ յատուկ գիրք մը հրատարակուած է 1895ին Ուաշինկզընի մէջ « Report on population and resources of Alaska » անունով :

**ԱԼԱՍԿԱ.** — Տեսակ մը փայլուն, կակուղ հիւսուածոյ, սեւ կամ գունաւոր : Ծագումն անգլիական է : Շինութիւնն սկսած է 1840ին : Վար տեսակները կը գործածուին վտաւակներու (միս) շինութեան, իսկ աղէկ տեսակները շրջագրեստներու եւն. : Ալբակն ամէնէն աւելի Անգլիոյ մէջ կ'արտադրուի : Եօրքայր շինութեան կեդրոնն է իսկ Պրատֆորդ՝ վաճառականութեան : Փրանսայի մէջ ալ կը շինուի այս կերպար, ինչպէս ի Ռուսի, Թուրքուէն և Ռուան, բայց Փրանսական ալբակը չի հաւասարիր անգլիականին որ փայլուն է :

**ԱԼԿՕՆԱ.** — Բաղաք Բրուսիոյ և գաւառ Շլէզվիկ-Հոլթայնի, էլլա գետին աջ եզերքին վրայ : Բնակիչ 150,000 : Համպուրկի չափ վաճառաչահ : Ծարտարարուեստ. — Մեքենայ, ծխախոտ, թուղթ, խաւաքարտ, գլխարկ, շոքոլա, կաշի, ապակեղէն : Վաճառականութիւն. — Արմբտիք, ծխախոտ, փայտ, արջառ, կարագ : Գրամատուն՝ 9 հատ : 1899ին 862 նաւ հանդիպած են 266,704 թօնօ տարողութեամբ :

	Ներածում	Արտածում
	1000 քիլօ	
1875 ին	82,718	16,768
1880 »	72,347	17,614
1885 »	258,169	14,695
1890 »	351,136	33,251
1895 »	313,308	42,693

**ԱԼԱՍԿԱ - ԼՈՒԷՆ.** — Մակերեւոյթ՝ 14,507 քառակուսի քիլոմէթր : Կը պատկանի Գերմանիոյ, ո՛չ իբր դաշնակից պետութիւն, այլ իբր Կայսրութեան երկիր (Ռայխսլանդ), ըստ 1871 Փետր. 26ի հաշտութեան նախաշաւիղ պայմանագրութեան, Մարտ 10ի հաշտութեան դաշնագրին և Հոկտ. 12ի յաւելուածական պայմանագրին տրամադրութեանց : Սահմանակից երկիրներն են Ֆրանսա, Չուիցերիա, Պատի մեծ դքսութիւնը, Պավերիա, Բրուսիա և Լիւք-



սէմպուրի : Ալզասի արեւմտեան կողմը շատ բլրակներ կան : Կլիման խիստ չէ : Բնակիչ 1,640,986, ըստ 1895ի մարդահա-  
մարին : Հողագործներուն թիւն է 310,000, ճարտարա-  
րուեստի գործաւորներունը՝ 250,000 և վաճառականութեան  
պարագողներունը՝ 55,000 : Գերմանիոյ կայսրը գերագոյն  
իշխանութիւն ունի : Գործադիր վարչութիւնն յանձնած է  
կուսակալի մը, որ Սդադիպլդեք կը կոչուի : Ալզաս Լոռէն  
յատուկ օրէնքներ ունի հանրային շինութեանց, կրթու-  
թեան, կրօնի, արդարութեան, երկրագործութեան, և մին-  
չեւ իսկ ներքին գործերու համար : Ելմտական տարին  
կ'սկսի Ապրիլ 1էն և կը վերջանայ Մարտ 31ին : Ելմտա-  
ցոյցին ծախքն է 52,905,370 մարք և հասոյթը 53,466,596  
մարք : Ունի նաեւ արտասովոր ելմտացոյց մը 4,726,154 մարք  
ծախքով և 4,165,018 մարք հասոյթով : Այս ելմտացոյցէն  
կարեւոր գումարներ ծախսուած են ջրանցներու պեղման  
համար : Ալզաս-Լոռէն Գերման կայսրութեան կը վճարէ 14,  
350,123 մարք տուրք : Ուղղակի և անուղղակի տուրքեր  
ունի : Շատերը Ֆրանսական օրէնքի համեմատ կ'առնուին :  
Իսկ գինիի վրայ տուրքն յատուկ օրէնքով սահմանուեցաւ :  
Մաքսատուրքերն և ծխախոտի, շաքարի, աղի, ալքօլի,  
խաղի թուղթերու և դրոշմի տուրքերը կայսրութեան կը  
պատկանին : Անտառներէն զուտ 6 միլիոն մարքի եկամուտ  
կը գոյանայ : Հողին 47,75 0/0ը հերկելի է, 12,27ը՝ մար-  
գադետին, 3,15ը՝ արօտավայր և անմշակ, 2,25ը՝ այգի,  
30,59ը՝ անտառ, 0,56ը՝ շէնք և 3,43ը՝ ճամբայ : Հերկելի  
հողին 26,30ը յատկացուած է ցորենի, 8,40ը՝ գարբի, 15ը՝  
վարսակի, 13ը՝ գետնախնձորի, 0,40ը ծխախոտի եւն . :  
Կալուածական տոմարի մէջ արձանագրուած են 770 հազար  
չէնք : Պզտիկ և միջին տունները շատ են : Մեծ տուններն  
ընդհանրապէս Լոռէնի մէջ կը գտնուին : Կան 137,327 ձի,  
487,234 եղ, 97,303 ոչխար, 370,405 խոզ և 62,098 այծ :  
Երկրագործական ճարտարարուեստի մէջ յիշելի են գարե-  
ջուրը, տարեկան արտադրութիւն 800,000 հարիւրալիդր և  
գինի որուն արտադրութիւնը կը հասնի մէկ միլիոն հարիւ-  
րալիդրի և գլխաւորապէս տեղւոյ վրայ կ'սպառի : Շաքարի

ճարտարարուեստը 1894ին մտցուեցաւ : Գետերուն մէջ շատ  
տեսակ ձուկեր կան, ինչպէս ծածան, օձաձուկ, գայլաձուկ  
(քուրեա պալլըր), վահանաձուկ, կարմրախայտ եւն . : Ռէնի  
մէջ լօսդ (սայլօսն պալլըր) ալ կայ : Քարահանքերէն կ'ել-  
նեն շինութեան քարեր, կրահող, գաճաքար եւն . : Կարե-  
ւոր աղահանքեր կը շահագործուին Լոռէնի մէջ, ի Տիէօզ,  
Սաարալպէ, Վիք եւայլն : Լոռէնի մէջ կան նաեւ հանքա-  
ծուխի երակներ և ստորին Ալզասի մէջ՝ քարիւղի հորեր :  
Երկաթի հանածոներ առատօրէն կը գտնուին Մօզէլի ձախ  
եզերքին վրայ, հիւսիս-արեւմտեան կողմը : Երկաթի, պող-  
պատի մեծ գործարաններ և ձուլարաններ կան Լոռէնի մէջ  
և մեքենաներու գործարաններ՝ Ռայխսհօֆէնի և Միւլհաուզի  
մէջ : Քիմիական ճարտարարուեստն այնքան զարգացած չէ :  
20 տարի առաջուան վիճակին մէջ է : Հիւսելի ճարտարա-  
րուեստին մէջ նշանակելի են բամբակն ու բուրդը : Բամբակի  
յատուկ մանարաններ, հիւսարաններ, լուացարաններ և  
ներկատուններ կան Միւլհաուզի մէջ և շրջակաները : Այս  
ճարտարարուեստ գրէթէ կայուն վիճակ մ'ունի, 1871էն  
ի վեր : Յիշատակութեան արժանի են Սէն Լուիի քիմիալ-  
ները, Սարէնկմիւնի բօսորկեններն ու Ֆայանսները, Քոլմարի  
խաղախորդարաններն եւն . : 65,000 մեքենաներ կը բանին  
ճարտարարուեստի համար : Ալզաս-Լոռէն ունի Ռօնի, Ռէնի  
Մառնի, Սաառի, Մօզէլի ջրանցքները, որոց խորութիւնը  
աւելցնելու համար մեծ գումարներ ծախսուեցան 1892ին :  
Ջրանց մ'ալ շինուեցաւ Սդրազպուրիի նաւահանգիստը  
Իէնի հետ կապելու համար : Ալզաս-Լոռէն 1500 քիլօմէթր  
երկաթուղի ունի, զոր կայսրութիւնը կը շահագործէ : Այս-  
պէս հաղորդակցութիւն հաստատած է դրացի երկիրներու  
հետ, մանաւանդ Պատի մեծ դքսութեան հետ : Բանի մը  
տարիէ ի վեր բազմաթիւ թրամուէյներ շինուեցան : Ռայ-  
խսպանքը մասնաճիւղեր ունի Սդրազպուրիի, Քոլմարի,  
Մէցի և Միւլհաուզի մէջ : Կան ուրիշ պանքաներ ալ, որոնց  
գլխաւորն է Միւլհաուզի Պանքան, 12 միլիոն մարք դրամա-  
գլուխով : Սդրազպուրիի մէջ կալուածական վարկի պանքա  
մը և խնայողութեան ու փոխատուութեան սնտուկներ կան :



Մաքսային սակացոյցերու պայքարին հետեւանքով, Ալզաս-Լոռէն իր արտադրութիւնները գլխաւորապէս գերմանական երկիրները կը շրջէ: Դրանցիցի վաճառականութիւն գրէթէ չկայ, բացի հանքածուխէն որ Զուիցերիա և Իտալիա կ'երթայ: Ալզաս-Լոռէն գերմանական դրութեան կը հետեւի դրամներու, կշիռներու և չափերու մասին, թէեւ շատ առեւտրական տուներ ֆրանքով կ'ընեն իրենց հաշիւները, 80 բէննիկը մէկ ֆրանքի հաշուով: Ալզաս-Լոռէն Գերմանիոյ առեւտրական օրէնսդրութեան ենթարկուած է:

**ԱՂԺԵՐԻՍ.** — [Աշխարհագրական. — Պատմական. — Ժողովուրդ. — Քաղաքային եւ վարչային կազմակերպութիւն. — Երկրագործութիւն. — Դուրարարութիւն. — Անտառ. — Հանք. — Ճարտարարութեամբ. — Առեւտրական դրութիւն. — Արտարին վաճառականութիւն. — Վարկ. — Հաղորդակցութեան ճամբաներ. — Տնտեսական կացութիւն. — Մայրաքաղաք. — Ալժէրիոյ զինինքը ]:

Հիւսիս. արեւմտեան Ափրիկէ. հիւսիսէն Միջերկրականի, արեւմուտքէն Մարոքի, արեւելքէն Թունուզի եւ հարաւէն Սահարայի միջեւ: Մակերեւոյթ 700,000 քառ. քիլօմէթր:

Գլխաւոր քաղաքներն են Ալժէ, Մուսթաֆա, Պլիթա, Դիզի-Ուզու, Մէտէա, Տէլլիս եւլն: Ալժէրիա ամէն բանէ առաջ երկրագործ երկիր մ'է: Բնիկ երկրագործներուն թիւը 3,245,000 է, իսկ Եւրոպացիներունը՝ 199,000, Բնիկներն ընդհանրապէս նախնական մէթոտներով կը մշակեն եւ քիչ ծախք կ'ընեն: Եւրոպական մշակութիւնն աւելի զիտնական հիմերու վրայ հաստատուած է եւ լաւագոյն արդիւնք կ'արտադրէ, բայց սուղ է: Մշակուած հողն  $3\frac{1}{2}$  միլիոն հէքդար է: Ամէնէն կարեւորն է արմտիքի մշակութիւնը որ 2,800,000 հէքդար տարածութիւն մը գրաւած է: Կը մշակուին մանաւանդ կարծր եւ կակուղ ցորեն, դարի, վարսակ, եգիպտացորեն, հաճար եւլն: 1898ի բովանդակ արտադրութիւնն եղած է 16,577,000 կենդինար: Գետնախնձորի տարեկան արտադրութիւնն է 200,000 կենդինար: Բամբակի մշակութիւնը, որ երեսի վրայ թողուած էր, նորէն ձեռք առնուեցաւ: Շերամաբուծութիւնը դարգացած վիճակ մը ունի: Ծխախոտի մշակութիւնն եւ վաճառումն ազատ են: Այգե-



« Ազգային գրադարան



NL0083828



